



12. ԳՅՈՒԼՓԵՐԻ

Խեր ու մեր ըմ կ' եղի, իտոնց էլ իրեք աղջիկ կ' եղի: Էն պատիկ շատ խորոտ ի, անուն Գյուլփերի կ' եղի: Խեր կծեծա կիտա մեր, մեր կծեծա կիտա երկու քուր՝ կծեծա:

Գյուլփերին կասա. - Ես մալա չ' եղիր, էլիմ փախիմ էսա տնից, էրթամ էղիմ քաննատար:

Էդ տնեն Գյուլփերին կը թորկա կ' էրթա:

Կ' էրթա գեղ տեղ մի, կը մտի մըջ տիգի մի: Էն տիգի տեմուկ մեկ քոշկ սարե մի կա:

Էն քոշկ ու սարի մեջ իրեք ախպեր կա: Ախպըրտիք թորկած կէրթան ավուկուշ:

Գյուլփերին տիգի միճեն կիճի գա: Կ' էրթա մտի տուն, զտախտ ու տուն կավլա: Կը պերա զեմագ կեփա: Ինք կ' էլի կէրթա մըջ տիգին էլման:

Իրիկուն ախպըրտիք կիգան տուն: Կտեսին օր թե եմագ-զեմագ էփուկ ա:

Ախպրտիք կասեն. - Մըզի ննյար կա, եկած էսա զեմագ եփած, տեղ թալած վըրեն՝ ուտինք մեռինք:

Պստիկ ախպեր կասա. - Ախպրտի՛ք, ես ուտիմ, թը մեռա, տյիւ մ' ուտեք, օր չմեռա՝ տյիւք կերեք:

Պստիկ ախպեր կուտա, չմեռիր: Էտոնք էլ կուտին:

Առավոտ կ' էլին կէրթան ավուկուշ:

Պստիկ կը թորկին տուն, կասին. - Մուղաթ էղիր, տեսանք վո՞ն գնա տուն:

Պատիկ ախպեր կ' էլի նստի վըր չիման: Կը քնի, ըմլա կը մնչի: Աղչիկ կը գա՛ կը մտի մըչ տան, գեմագ կ' էփա, զտախտ ու տուն էլ կ' ավլա, կը գա օր թե ընցի էրթա մըչ տիզին, օր թե շեմք շենքա տղեն կ' իմնա: Ծեռ կը թալա գաղչիկ կը պոմա:

Աղչըկեն կ'ասա. - Քո խոգուն-երիվուն մեռնիմ, ես կիշերով շուռ կը գի, ցիրեկով ընգար իմ առե՛ծ, արի քե տանիմ պախկըվըցում մըչ տիզին:

Կը տանի պախկըվըցու մըչ տիզին:

Իրիկուն էրկու ախպեր կը գա՛ն տուն:

Կասա. - Ախպեր, պա՛ն չտեսա՞ր:

Պատիկ ախպեր կ' ասա. - Չէ՛, ես պա՛ն չտեսեր եմ:

- Չասե՛ս՝ քյու վիզ կգա՛նենք:

Կէլի ըզ Գյուլփերին տիզի միչեն կանչա, կառի կիգա՛:

Կասեն. - Էնենք մեզի կնիկ: Մեկին կ' էղի, մեկին չ' էղի՝ էնինք մեզի քյուր:

Կ' էնին իրենց քյուր:

Էն Գյուլփերին թորկենք տա՛նի:

Գյուլփերու ճյոչ քյուր կ' էլի ճակատ կը կապա, խայլին կառի, էրես կիրիշկա:

Կասա. - Մարե, ե՞ս եմ խորոտ, չէ՞ Գյուլփերին: Վըր աշխըրքին խընձ գի խորոտ կա՞:

Կասա. - Յա՛յ քո ծամեր կտրիմ, կասես թե Գյուլփերին ի, օր թե էղեր ա իրեք ախպոր քյուր:

Կասա. - Ապա մարե, ես էմա՞լ էնիմ, օր թե Գյուլփերին կուռիսեմ:

Կասա. - Դ՛ իլի, առ էմա մաղ ու էմա փշուր ծամոն, զընա՛: Կերթաս զմաղեր կծախես Գյուլփերու, տուն:

Կ' էրթա կխասի Գյուլփերու տուն:

Կասա. - Խանըմ, մաղ չ' առի՞ս:

Կասա. - Մաղ առիմ, ի՞նչ մաղեմ, փէտեր մաղե՞մ. պա՛ն չկա մաղելու:

Կասա. - Դե որ չ' առիս, առ էմա փշուր ծամոն, թալ քո պերան՝ գա՛խ մի ծամա, ինչ գա՛խ քե քուն կը գա՛, քո քուն կը խըռտի:

Աղչիկ գծամոն կ' առի: Օր թե քուն կը գա՛, կըմընչի՝ կընգի էտոր միտ: Ձեռ կը տանի ջեք, կը խանա գծամոն, կը թալա ուր պերան, օր թե փըշում կը ծամա, կը մեռի Գյուլփերին:

Իրիկուն ախպըրտիք կը գա՛ն տուն, կը տեսին օր Գյուլփերին մեռեր ա: Կիլա՛ն էտ իրեք ախպեր վըր Գյուլփերուն:

Մեկ կասա. - Տանենք խորենք:

Սեկել կասա. - Էն մեկ ջորին պըռնեմ մեզի չեղեր ա, պերենք տնենք մըջ մեկ սանդուխին, ըն մեկ յան էլ քար կըլլինք ու դըրք մը զանենք ջորուն՝ թըխ դոր կը տանի, թի տանի:

Կը պերեն էն շենք կ' էնին, դըրք մը կը զանին ջորուն, ջորին կերթա: Էտ ծամոնի ճուր՝ դեղ ու մեջ, կիզա թափի ախչկե պերենն: Աղչիկ մըջ սանդուխին կը սաղնա:

Կ' էրթա թաքավորի սարի տըկով կ' ընցի ջորին:

Թաքավոր նշան կը պոնա, ջորին կը սպանա:

Կասա. - Դե, մըշկըներ, վազեք տի, էնի՞նչ ա մըջ սանդուխին:

Կ' էրթա կիրիշկին՝ մեկ աղչիկ ա, մեկն էլ քար ա:

Կ' առին կ' էրթան զաղչիկ:

Թաքավոր կ' էնա ուրին տան մեջ բանատար:

Աղչկե աչք ու թաքավորու տղին կ' ընգի իրար:

Թաքավոր կ' էլի փսակա զԳյուլփերին վըր ուր տղին:

Կը մնա էտոր թոռ ըմ կ' էլի: Ամեն օր էտ թաքավոր, օր թե համա քընուց կ' էլի, կասա. - Յամա՞ն, իմ թոռ պերեք, ես տեսիմ:

Էն թորկենք տանի: Տառնանք վըր Գյուլփարու ճեռք քյուրոջ:

Էն մեկ օր ճեռք քուր կ' ըլնի ճակատ կը կապա:

Կասա. - Մարե՛, էսա աշխարք ընծ զի խորոտ կա՞:

Կասա. - Դա՛յ քու ծամեր կտրեմ, խորոտ Գյուլփերին ի, օր թե էղեր թաքավորին խարս:

- Մարե՛, իմա՞լ էնիմ զէնի կուրիսիմ:

- Էլի գնա էնոնց տուն, էլի բանատար:

Ճեռչ աղչիկ կ' էլի կ' էրթա Գյուլփերու տուն:

Էլ կասա. - Ընծի չպըռնե՞ք ծե բանատար:

Կասա. - Կը պոնիմ, հորի՞ չպոնեմ:

Կը մնա օր մի, գիշեր կը պառկին: Կ' էլի իր բանատար էն խարսի ջերեն տանակ կը խանա, տղի վիզ կը կտրա, կը պեռա առնուտ տանակ կը թնլա թաքավորի խարսի՝ Գյուլփերու ջեր:

Առավոտ կ' էլի, օր թե տըղեն ճըղորեն խանա, ծեռ թե հմլա կիտա գլեոխ, գլեոխ կը փրցի կինգի:

Խաբար կը տանեն թաքավորին, կասեն. - Քո թոռ սպանիլ են:

Կը պերեն կասեն. - Էսի վո՞ն ա սպանիլ:

Բանատար կասա. - Վիր ջոր առնուտ տանակ էղավ, էնի ա սպաներ:

Կ' էլին կ' իրիշկին ուրանց ջերեր, կը տեսին օր թաքավորու խարսի՝ Գյուլփերու ջերքն ա:

Կասեն. - Գյուլփերին ա ըսպանիր էս տղեն:

Կէլին տղեն կիտան մոր գիրկ, կը խանեն տյաւ: Գյուլփերին կերթա: Կերթա սարի մը ռաստ կիգա:

Կ' էլի էտ սարի քամակ, քարիմ տակ կը նստի:

Էրկնուց խրիշտակ ըմ կիծի, կասա. - Գյուլփերի', տյաւ անոթի մեռար:

Գյուլփերին քնուկ տեղեն կշտկի կիշկա, մառթ չկա պիւլետոր:

Մեկ էլ կը քնի, կը տեսի մեկ էլ կը գա էտ խրիշտակ:

Խրիշտակ կասա. - Գյուլփերի', Գյուլփերի', էլի խացի սուֆրեն գյո քո գլխու վիրև, խաց ինե ա, էլի պեր կեր:

Կ' էլի կիրիշկա: Կառնի սուֆրեն կիգա, կը նըստի խաց կուտա: Կը տանա կը քնի:

Խրիշտակ կը գա, կասա. - Գյուլփերի, իչի, քյաւ տակ անպայուր մի կա, փշու մի խմա էն անպարից, քո ծեռ թաթխա մըչ ախպըրին, հըմլա գար տղի վզին, տղի գլետի տիր վըրեն, տղեն կը սաղանա:

Կ'էլի կ'երթա ախպրի վրեն, խրիշտակի ասածի պես ճյուր կ'գանի տղի վզին՝ տղեն կը սաղանա:

Կը մնա առավոտ. առավոտ կը պացվի վըր ազըրներուն, Գյուլփերին կ' էլի կ' էրթա: Կ' էրթա էն իրեք ախպոր մօտ:

Գընաց մըտավ գողտուկ մըչ տիգին, օր թե ախպըրտիք չտեսին:

Ախպըրտիք հիրկուն կը գան տուն: Գյուլփերին կիծի, կ' էրթա տիգի միջեն տուն:

Ախպեր կասա. - Աղչի', էտ ի՞նչ ա քո գիրկ:

Կասա. - Վալլա', ախպեր, քեզից պախենմ, Աստըծուց ի՞նչ պախենմ: Ես էլա թաքավորի տղեն առա, բանատար էլավ մոռթեց զիմ տղեն, էլան տվեցին իմ գիրկ, ես էլ առեր եմ իմ տղեն, էկեր եմ ծեր տուն: Իմ վիզ կը գանեք կը թորկեք, տյաւ գիտեք, ախպըրտիք:

Ախպեր կասա. - Պան չըկա, տյաւ մեզի քյուր ես, մենք էլ քըզի ախպեր ենք:

Կ' էլի տանիս կ' իրիշկա ճեռչ ախպեր: Կ' իշկա, կը տեսի իրեք խոզի կը գան:

Ճեռչ ախպեր կասա. - Վալլա', էսոնք էկան վըր մեզի կռիվ:

Գյուլփերին էլ կիշկա, կասա. - Էն մեկ իմ կծորերն ա՝ թաքավոր, էնա մեկն էլ իմ առածն ա՝ թաքավորու տղեն, էնա մեկն էլ ուր առածի լալեն ա:

Էտիկ ճեռչ ախպոր կասա. - Օր թի թաքավոր կը գա տուն, սուֆրեն կը փղռես առճըվներ, խաց կը տնես, կուտեն էտոնք: Ու գըտալըմ վերցես գողտուկ թալես թաքավորի ջեռ:

Թանձրավորն էկավ տուն: Գյուլփերին սուֆրեն փռեց հառնեմ:

Թանձրավոր խաց կուտա: Ճեռչ ախպեր գողտուկ գտանլըմ վերուց դրեց թանձրավորի ճեռքն: Խաց կերան փշուցան:

Թանձրավոր կասա. - Դե, արի էսա սուֆրեն փրցու:

Կգան սուֆրեն կծալա՝ չծալվի:

Կըսա. - Թանձրավոր ապրած, թե պանմ վե՞րցրեր եք՝ թանլեք ինե, թը ծալվի:

Կըսա. - Ջանը՛մ, խո մենք չէլա՞նք գյրիդ:

- Չէ՛, - կասա, - թանձրավոր, ծեր դարբար աչկեք:

Կիշկա՝ գըտանլ թանձրավորի ջեռքն ա:

Կասա. - Տեսա՞ր, թանձրավոր, գյող էլան:

Կասա. - Վալլա՛հ, ես խաբար չիմ:

Կասա. - Տյիւ կիդի՞ր՝ քո խարս քո թռռ մորթեր էր:

Կասա. - Չէ՛:

Կասա. - Քո թռռ, քո տան բանանտարն ի մորթեր:

- Թանձրավոր, տե՛ս, էսա գըտանլ ես թանլեցի քո ջեռք, քո բանանտարն էլ քո թռռ մորթեց, դանանկ էթալ խարսի ջեռք:

Կասա. - Ու՞ր ա իմ խարս, կանչա՛, թի գա դաս տի:

Կը կանչա՝ կը գան, կը տեսի օր թե տղեն էլ սաղ ա, գիրկ:

Թանձրավորն ասաց. - Ջանը՛մ, էսոնք խրիշտա՞կ են, տղեն էլ սաղուցած:

Ճեռչ ախպեր թանձրավորին կ' ասա. - Դե, առ քո խարս, կնա:

Կ' էլնին Գյուլփերին կիտան թանձրավորին էլըմ:

Թանձրավոր կասա. - Դե՞ ուզեք, ծե աղչիկ մա տամ:

Կասա. - Ես ի՞նչ մալ ուզիմ, իմոն խընչ քոն շատ ա:

Թանձրավոր կ' ըլի էնտեղացեն, կառի գխարս, կը գան ուր տուն, կը փսակա վըր լանճուն:

Ու յոթն օր, յոթ կիշեր դոմփ կը գանի:

